

142-1

I-5

71

ԱՆԱՏԻՏ

ՀԱՆՐԱՊԵՏ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՅՈՒՆՈՒՐ 1899

ԹԻՒ 3

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Մեր ժողովրդին թերութեանց ամենէն աղ-
խուրը եւ ամենէն վտանգաւորը, պատասխա-
նատուութեան զգացման պակասն է։ Ու երբեք
այդ թերութիւնը այնքան բիրտ անման մը հա-
սած չէր որքան Հայաստանի ջարդերէն ի վեր։
Ունմը մը Հայի որդեպաշտ պատճառ եղան
դէպքերուն փութացմանն ու աղէտքին պայթ-
մանը, եւ ազգին վրայ հրէշային հակայական պա-
տուհաս մը խուժեց. օտարները, ի տես կամ նոյն
խոյն միակայն ի լուր մեր մարտիրոսութեանը,
օտարափի եւ արգահատանքի աղաղակներ արձա-
կեցին. տեսանք վեհ օրինակներ զոր տուին ա-
նոնցմէ ոմանք իրենց դիւթիւնը դրապէս արտա-
յայտելով. ոչ ոք մոռցած է ի միջի այլոց՝ զիցցազ-
նական տիկին Մէլիէն, Տիարպէթի հիւպատոսին
կինը, որ երեք հարիւր հայ որբեր առջեւը
ձգած, իր զաւակներն ալ անոնց մէջ խառնած,
իւր անձին վտանգովը մինչեւ Իսթընթուրու
տարաւ զանոնք՝ ազատելու համար վերահաս
փորձանքէն. գիտե՛ք ուրիշներ որոնք իրենց
յուզմունքէն հիւանդացան, յիմարութեան մո-
ռեւ անցան. կիներ, զեռասի աղջիկներ իրենց
երկրէն ելան մինչեւ Հայաստան գացին, վը-
տանքին ու ձմեռին մէջ, օգնութիւն տանելու.
անհատական հիմնալի վանքեր տեսնուեցան Եւ-
րոպայի հանրային կարծիքը արթնցնելու. իսկ
մերթնեւոր, անոնք որ ուղղակի պատասխա-
նատուութիւնը ունէին, կը կարծէք որ դէպ-
քերուն ազգեցութեանը տակ, զոնէ գիշեր մը
քուռներին փախած ըլլայ. Միա՛միտ էք եթէ
այդպէս կը կարծէք։ Ոչ միայն քուռներն չը-

փախաւ, այլ ընդհանուր կսկիծին ու սուգին
մէջ, այդ ալանդակ հայրենասէրները աւելի
յոխորտ, աւելի անհոգ, աւելի խորիտ ու
զուարթ, այդ՝ զուարթ երեւցան։ Ատոնց հա-
մար արդէն ոչինչ կար կորսուած, ոչինչ կար
ցաւելիք։ Երբ Սուլթանը բովանդակ Հայաս-
տանը արհնի մէջ կը խեղդէր, Նազարէկ իր
Հնչակին մէջ կը հրճուէր, կը խայտար, «Վեր-
ջապէ՛ս, կը գոչէր, հայ ժողովուրդը արթնցաւ,
եւ Սուլթանը ահա սահմուկած կը գողայ դի-
մացնիս»։ Պանքային ցոյցէն յետոյ, երբ 6000
հայ ջարդուեցան Պոլիս, երբ Պոլսոյ հայու-
թեան զիրքը վերջնապէս խախտեցաւ ու քա-
ջայեցաւ այդ քաղաքին մէջ ու ողբալի, փա-
խատական տարտղնում մը սկսաւ դէպի օտա-
րութիւն, Դրոշակը կը պանծար ու կը ցնծար՝
«Հի՛մա, կ'ըսէր, Սուլթանը զգաց Հայուն ու-
ժը . . .»։ Այս քառմանի կատարը տեսցէ
կայն ատեն։ Ու վա՛յ այն ծիծաղելի հաղուա-
գիւտ անխմաստ Հայուն որ համարձակէր ցաւ
զգալ ու տրամիլ. անիկա «լալկան» մը, «նեղ-
քինի» մը, «պառու» մըն էր։ Ու մահաւանդ
վա՛յ աւելի հաղուագիւտ ու նեղացուցիչ այն
Հայուն որ համարձակէր քննադատել, սխալ-
ները ցուցնել, նոր ոճիւններ գործուելու հա-
ւանականութեան առաջն առնելու ջանալ.
«Հաւանան» մըն էր ան։ Երբեւ հարիւր հազար
հոգի մեռած . . . հարիւրաւոր վանքեր, եկե-
ղեցիներ, զարդոցներ, տուններ քանդուած, հայ
տարրին թիւը նուազած ու զիրքը տկարացած,
Հայուն նոյն իսկ քաղաքական յոյսերուն հիմը
խախտած . . . Ինչ փոյթ. չնչին թանրամա-
նութիւններ էին ասոնք. կ'արժէ՞ր կանգ առ-
նել այնքան փոքր զոհողութեան համար։ Եւ

սուտ կը խօսեին, անդադար կրկնելով թէ ուրիշ ժողովուրդներ աւելի զոհած են իրենց փրկութեանը համար, մինչդեռ ոչ մէկ ժողովուրդ այսքան զոհուած ու վնասուած չէ, ու ոչ մէկ ժողովուրդ արդէն յանձն չէ առած եւ չի կրընար աւելի որ առանց հաստատ ծրագրի, առանց որոշ ուղղութեան, նոյն իսկ մէկ հոգի մը զոհ տայ : « Ի՞նչ կ'ըլլայ, կ'ըսէր Պանքային ցոյցէն քիչ յետոյ, բարեգաճակ գործիչ մը, «ինչու իրար անցնել որովհետեւ քանի մը հազար հոգի մեռեր է . լաւագոյն է որ ամբողջ ազգը ջնջուի, քան թէ արդի կացութեան մէջ մնայ» . ըսողը մատը արեւմտ չէ երեք դասցիին համար, եւ այս խօսքը կ'ըսէր Հաստատնէն շատ հեռու, Բարիի սիրուն մայրիկ վրայ : Ուրիշ մը շատ աւելի ճիշտապէս բանաւեւ մը գտաւ որ մը . լրագրի մը մէջ հարեւանցի կերպով տեսած ըլլալով թէ անգլիացի չեմ գիտեր որ դեւանագաւը չեմ գիտեր որ միթիկին մէջ «պէտք է Հայոց խնդիր կարգադրել» ըսեր է : «Օ՛, կը գոչէր, քանի որ այրպէս . պէտք է անշարժ մնանք, պէտք է իսկոյն ինչ մը փայտ նետել կրակին մէջ . . . «Բիշ մը փայտ նետել»ը այդ արարածին բառարանին մէջ կը նշանակէր Հայաստանի մէկ անկիւնը դէպք մը բռնկանք եւ քանի մը հազար Հայու ջարդ յառաջ բերել . . . Եւ այս եղանակը դեռ կը շարունակուի : Անոնք որ իրենք զիրենք յեղափոխական կը կոչեն մեր մէջ, անդրդուելի աւելութիւնը ունին քննութեան, ուսումնասիրութեան . ուրիշ բան չես գտնիր իրենց թերթերուն մէջ բայց եթէ քնարերգական բացառանկութիւններ (եւ ի՞նչ քնարերգութիւն . . .) ոչ մէկը դեռ ճշմարիտ բաղդատութիւն մը չըբուսաւ Պուլկարներուն, Յոյններուն կամ Կրէտցիներուն կացութեանը եւ այն կացութեան զոր Հայերը ունին . ոչ մէկը լրջօրէն ջշմանաց քաղաքական աշխարհին մէջ անցած երեւոյթները ուշի ուշով գննել եւ անհրաժեշտ ընդհանուր յոսանքի տեսութիւն մը պարզել ժողովրդին լուսաւորութեանը համար . արդէն մեր գործիչները արտակարգ գիւտն ալ ըրին քաղաքականութիւնը արհամարհելու (քան մը զոր ոչ Պուլկարները, ոչ Յոյնները որած են երբեք, ոչ ալ Կրէտցիները ըրին), իրենք կ'արհամարհեն եւրոպական դեւանագիտութիւնը, եւ բացէ ի բաց յայտարարեցին թէ Հայերը պէտք է գործեն անկառախ ազնի բանի եւ ամենուն, ընդդէմ ոչ միայն Թուրքին, այլ բոլորանգի Եւրոպային, ընդդէմ բոլորանգի աշխարհին . . .

Եւ կը զատաւորեան այն մէկ քանի խղճամտի հաստաները որոնք, համատարած անգիտակցութեան մէջ, ուղեցին քննութեան լոյսը բերել : Ու չեն ամենար աւագակի հայրոյնանքներ հանել՝ անկեղծօրէն, անաչառօրէն մէջ բերուած փաստերու եւ խորհրդածութիւններու ղէմ . . . Եւ կ'ըսեն շարունակել նոյն բանը, նոյն ձեւով — որպէս թէ ոչինչ պատահած ըլլար . . .

Թերթի մը մէջ, որ իրեն զլիսաւոր նպատակ ունի ազգին բարոյական զարգացմանը նպատակ, մենք չենք կրնար լուռ մնալ այսպիսի տխուր երեւոյթներու առջեւ : Որպէս զի ազգը իր բարոյական ու նիւթական կացութեան բարեփոխմանը գործը կարենայ լրջաբար կատարել, մեզի համար էական պարտք մը կը համարեն մասնաւոր ընել այսպիսորութիւնները եւ անխղճամտութիւնները, տգիտութիւնները եւ խարբեայութիւնները, որոնք ապարդիւն կերպով կը փճացնեն մեր ժողովրդին ուժերը, եւ «կը վտանգեն» մեր ազգային խնդրոյն իրական յաջողութիւնը :

Մասնաւոր կ'ընենք այդ ամէնը, եւ կ'անցնինք մեր գործը շարունակելու, այն է տարբեր փայտ քննել մեր խնդրոյն պատմութիւնը, անկողնանակ մը անանձնական նայուածքով մը : Բազաւական կացութիւնը, այն բեղմնավոր ձեւովը զոր կ'առնէ հիմա, կը չեղտէ պէտքը այս քննութեան : Բանի որ կարեւոր դէպքեր հաւանական է որ պատահին, անհրաժեշտ է որ մենք մեզ վերէն վար չափենք ու կշռենք, տեսնենք ճշիւ ինչ որ ըրինք եւ հետեւեցնենք ինչ որ ընելու ենք : Այս թերթը, անկախ ու եւ է կուսակցութիւնէ, օրական խումբ մը դրագետներու, ամենէն աւելի ազատութեամբ եւ ընդարձակութեամբ կը շարժարկէր այդ քննութիւնը, որովհետեւ իր ընելիքը կուսակցութեան է կուսակցութիւն նիւզակախու մը պիտի չըլլայ, այլ գիտական ոգով տարբարութեամբ զէպերուն ու զործարկներուն, ո'վ ալ ըլլան հեղինակները եւ շարժարկները : Մեր քննութիւնը մենք պիտի չմասնաւորենք միայն վերջին տարիներու գործիչներուն վրայ, այլ պիտի սկսինք սկզբնաւորութիւնէն, համարաւոր ճիշդ յօդաւորին պատմութիւնէն, որ աղբիւրն է բոլոր այս վերջին դէպքերուն : Եւ մենք ուրիշներուն վարդապետական ինքնահաւատութիւնը չունինք . առաջուց կ'ընդունինք որ իւր-նանք փրաւած ըլլալ մեր զատողութեանց ու եզրակացութեանց մէջ . եւ եթէ անկեղծ ու

ձեռնհաս քննադատներ երեւանն որ ուզին ճշգրտել մեր սխալները, պատրաստ ենք մեր էջերուն մէջ իրենց լուսաբանութիւնները հրատարակել: Ու պիտի տեսնուի թէ, սկիզբէն ի վեր, անոնք որ հայրենասիրութիւնը իրենց մենաշնորհ բրած են, անոնք որ թմբուկով ու փողով ազգին փրկիչները հռչակ են իրենք գիրենք, ինսուսակ եղած են յաճախ, անգիտակցաբար կամ գիտակցաբար, մինչդեռ այն սակաւաթիւ հանդարտ ու խոհական մտքերը որոնք, հանգիստոր պոռչտուքներուն մէջ, համարձակած են լուրջ քննութեան մը արդիւնքը ներկայացնել, «դաւաճանող ու լայկան» համարուած են միշտ, առաջ ինչպէս հիմա:

* *

Երկու ամսէն, Ս. Բեգիսպուրիկի մէջ, պիտի գումարուի վեհաժողով մը, ուր եւրոպական մեծ առկախ ինդիւնները պիտի ծնունին համաձայնութեան մը հասնելու նպատակով: Ծիւղ քսան տարի առաջ, նոյն բանը տեղի կ'ունենար Պէրլինի մէջ, ուր բազմամիլիոն ինդիւններ վիճուեցան ու լուծուեցան, եւ ուրիշներ ալ արձանագրուեցան ու չլուծուեցան (ինչպէս մեր ինդիւնը): Ապշեցուցիչ բան մըն է որ քսան տարիէ ի վեր, ոչ մէկ Հայ մը գաղափարն ունեցած չէ մանրամասնաբար քննել Պէրլինի վեհաժողովին միջոցին Հայոց ձեռնարկած գործունեութեան պատմութիւնը, եւ սակայն, վիթխարի սխալներ գործուած են այդ շրջանին, եւ այդ սխալները երեւան հանելու պէտք էր առաջինն ըլլան մեր շննգերուն, Մենք համոզուած ենք որ եթէ այդ քննութիւնը կատարուած ըլլար, վերջին շրջանին մէջ գործուած սխալներն շատերը տեղի չէին ունենար: Այսօր որ պիտի ներկայանան կսկծալի հետեւանքին մէջն ենք, այլ եւս լուռ մնալու ոճիւր մը պիտի ըլլար: Պէտք է՝ որ վաղը նորէն կրկինք միեւնոյն սխալները:

* *

1877ին տեղի ունեցաւ ուսութեան պատերազմը, եւ այդ մեծ գէպին բաղմամբիւ արդիւնքներէն մէկը եղաւ «Հայկական ինդիւ» բառածին ծագումը:

Ի՞նչ էր կայսրութիւնը այդ միջոցին: Հայերը, ամբողջ օսմանեան պետութեան մէջ,

գորաւոր դիրք մը ունէին, Կիլիկիոյ եւ Փոքր Հայքի մէջ, անտեսապէս բարգաւաճ էին, հողային կարեւոր տարածում մը ձեռք ձգած էին, մէկ քանի կեդրոններու մէջ հոծ մեծամասնութիւն ունէին, եւ շնորհիւ աւանդական խորագէտ վարմունքի մը, ոչ միայն առեւտուրն ու արհեստները բռնած էին, այլ բարոյական մեծ ազդեցութիւն կը վայելէին տեղական թուրք կառավարութեան մօտ: Մեծ Հայաստանի մէջ, կեսերը նոյնպիսի հեշտ չէր Հայոց համար. Բիւրտան, Չէրքէզին ու թուրք պաշտօնային լուծը Հայուն նիւթական ու բարոյական զարգացումը կը գոհաւարացնէր հոն. բայց հոն ալ կացութիւնը գորացողի կողմէն ունէր եւ չափազանց լաւագոյն էր հիմակուանէն. ամբողջ մահմտական տարրը Հայուն գէժ ուղղակի ատելութիւն չունէր. Բիւրտան ու Չէրքէզին աւազակային յարձակումներուն ենթակալ էր, հայ գիւղացիին չափ, թուրք գիւղացին ալ: Բիւրտան իսկ մեծամասնութեամբ, —բացի միւրմիայն յայտնաբերած ապրող կատաղի ցեղերէ, — Հայոց հետ հաշտ էին, եւ նոյն իսկ տեղի Հայուն բարեկամ քան թուրքին. Բիւրտը (այս մանրամասնութիւնը յատկանշական է) իր հետոս տեղ գրկելիք նամականիքը Հայուն գրկ կուտար: Եւ եթէ գիւղերու մէջ, տեղ տեղ, թուրք կամ չէրքէզ աւազակը, կամ թուրք պաշտօնեան, հայ կամ թուրք գիւղացին կը կեղեքէր, քաղաքներուն մէջ, հայ աղուն մեծագոր էր եւ իր ազգին շահերը կրնար յարգել տալ՝ եթէ ուզէր: Պոլսոյ մէջ, Հայը, թուրքէն յետոյ, առաջին տեղը կը գրաւէր: Մուլթան Ալիքի օրով, կայսր պետական ամենաբարձր պաշտօններու հասաւ, եւ վայելից իբր ազգ, Պոլսոյ մէջ, գրեթէ բացարձակ ազատութիւն. Տատանները, Պալեանները, Տիւզեանները, Քէօզէները, Սերվիլէն, Օտեան, Աղաթան, Պոլսոյ հզօր անձնաւորութիւններէն էին. Հայը կառոյց Պոլսոյ գեղեցկագոյն սոփիաները, Հայը սկսաւ եւրոպական քաղաքացիութեան թուրք տարրին մէջ մուտքը դիւրացնել, իբր դասախօս, իբր հրապարակագիր, իբր արուեստագէտ, իբր պետական խորհրդական, իբր թատերապետ եւ իբր վաճառական. եւ իրեն թոյլ տրուեցաւ ունենալ իր սահմանադրական ուրոյն վարչութիւնը, իր թատրոնը (ուր, քնացող գրաքննութեան մը ջրթին, հայկազեան թաղաւորութեան մը վերականգնումը կ'իրագնէր ժամանակին թուրք պուէսները), իր սահմարձակ լրագրիչները, եւ ամէն միջոց կրթական շարժու-

մը կազմակերպելու : Կարելիութիւն կար , այդպիսի պայմաններու մէջ , ազգային վերածնունդնան գործը կամաց կամաց՝ ձեռքի տակէ՝ հասունանալու : Եւ մասամբ , Հայերը կատարեցին այդ գործը : Առաջին քայլը շատ լաւ առնուեցաւ : Խուճար մը եւրոպականացեալ Հայեր ուղեցին ազդին բարոյական զարգացումը դորացնելու : Թատրոնը գեղարուեստական զգացումը մշակեց , լրագիրը , զրբքը , լսարանը գաղափարներու հոսանք մը բերին , դպրոցը կանոնաւորապէս պատրաստուած նոր սերունդ մը հասցնել շնացաւ , եւ ամենքը մէկէն ընդարձակեցին ու բորբեքեցին ժողովրդին մէջ ազգային զգացումը , զարուն սկիզբէն ի վեր արդէն արթնացած : Այդ ամբողջ գործունէութիւնը , շատ ազնիւ ու փայլուն , անթերի չէր անշուշտ : Ղիպիւր աւելի տեղ կը բռնէր հոն քան անհրաժեշտ հայը . դեռ նոր կարգաւ սկսող ժողովրդի մը՝ գրաբար քերթուածներ , ակադեմական ճանքը կամ մեծածխոր դիւցազնեղութիւններ կը հրամայեին . Հայաստանի հին պատմութիւնը կ'երթնէին (եւ աղէկ կ'ընէին) բայց շատ քիչ ջանք կը ցուցնէին արդի Հայաստանը աշխարհաբարապէս , քաղաքականապէս ուսումնասիրելու : Ինչ դիւցազնները կը քերթէին , հերոսական զգացումներ կը ներշնչէին (եւ աղէկ կ'ընէին) , բայց ոչինչ կը փորձէին տակաւ առ տակաւ վարժեցնելու համար ամէն հայ անհատ իր անձը յարձակման մը դէմ զենքով պաշտպանելու : Դպրոցներէն ելան սերունդներ , խանդավառ ու թիրուս . իրենց հայրերը աշխատասէր , հնարազէտ , ճարտարագործ ու խոհեմ մարդիկ էին , ասոնք յաւակնոտ գաղափարականներ եղան , գրքի կտորեւանքներով շինուած . ասոնք Հռոմայեցուց պատմութիւնը գիտէին եւ Հիւսիս կարդացած էին , բայց ժամանակին քաղաքականութեան վրայ տարաւ գաղափար մը ունէին : Եւ այդ ամենքը Սահմանադրութիւնը կը տոնէին այնպիսի ուռուցիկ աւելումով մը՝ որպէս թէ Հայոց հինգերորդ Հարստութեան տօնը ըլլար : Եւ որովհետեւ Յունաստանը ազատած էր Եւրոպայի չնորիւ , այդ ամենքը հանգարտօրէն կը սպասէին այն ժամուն ուր Եւրոպան պիտի դար , յանկարծակի , Հայուն աղուոր աշօքերուն համար , Հայաստանն ալ ազատան . Եւ կ'երթէին յուսովից ու վստահ՝ « Թոյլայ հիմանց նոր Սյրարատ . . . »

Աւելորդ է ըսել թէ երբեք չեմ հկատեր այդ չըմանը իբր օսկիդար մը , իբր հախաձնելի եւ կատարեալ վիճակ մը : Թուրքը թոյլ էր

Հայուն հետ այդ միջոցին , որովհետեւ ինքզինքը դեռ շատ հզօր կը զգար եւ Հայն ալ նմանապէս շատ տկար , եւ անոր երգերն ու ճառերը քմիծաղով մը կը ներէր . եւ Հայը ունէր գաղափարական ազատութիւն մը միայն , Թուրքին գաղափարը միշտ անոր գլխուն վրայ էր . իր մատուցած ծառայութիւններուն համար սիրուած ու նոյն իսկ շփացուած ստրուկն էր Հայը որուն երեսին տրուած զգուհանքը կրնար ուղղուած վարկենինն ապտակի փոխուիլ . եւ արդէն Թուրքը , աւելի խորամանկ քան ուսմանդիկ Հայը , մէկ կողմէ այդ առերեւոյթ ազատութիւնը տուած ատեն , միւս կողմէ սկսած էր , մուկէն մէջ , խորիկ այն միջոցներուն զոր պէտք էր ձեռք առնել արդիւլու համար որ Հայերը երգէն անդին չանցնին : Միայն՝ այդ չըմանին անուրանալի առաւելութիւններ կը նշանակեմ , ցուցնելու համար թէ ո՛ր աստիճան կարելիութիւն կար Թուրքին դանդաղ ներողամտութենէն օգուտ քաղելու եւ թէ ո՛րչափ մերինները քիչ օգտուած են : Այս տողերը թող չըմանին գործիչներուն . ուսմանդիկ օրերու այդ կրակոտ մարդիկը ըրած են ամէն ինչ որ կրնային , եւ ոմանք իրենց ընդ կրցածը շատ ազիւ , շատ գեղեցիկ կերպով ըրած են . բայց պարտաւոր եմ հաստատել սա իրողութիւնը թէ չեն ըրած ամէն ինչ որ պէտք էր :

Եւ ասկայն , բոլոր այդ քնարերգականներուն հոյլին մէջ որ Արարատը կ'երգէին եւ Մեծ Հայաստանը ապտակ կ'երազէին , Լոռիս Մեկեղոթի , որ Թուրքի ամենէն հզօր եւ ամենէն սերուած անձնաւորութիւնն էր այդ միջոցին , ըսած էր հետեւեալ բաները , որոնք պատմական են , եւ որոնք պէտք էր ազդին գործիչներուն նշանաբանը ըլլային՝ « Կ'երը բան մի՛ յուսաք , ան մեզի պէտք է , վարը բան մը ըրէք , հոն մենք ալ թերեւս ձեզի կ'օգնենք » : Պէտք կայ՝ բացատրելու այդ « Կ'երն » ու « վարը » : Արդար ըլլալու համար , հարկաւոր է միշտ հոս որ մաս մը Հայեր , — որոնք արտայայտուել եղաւ Մեղեցի իր վէպերով եւ անձնական գործունէութեամբ , — այդ « վերի » ու « վար » ի խնդիրը հասկցած էին , եւ փորձեցին պատրաստել « վարը » , Կիրիկիան , այն միակ կեդրոնը ուր Հայերուն համար հասանալիութիւն կար ուրիշ գոյութիւն մը ձեռք ձգելու : Մրադիրներ չինուած էին , Կիրիկիան ընկերութիւնը հիմնուած էր , Կիրիկիոյ մէջ հողեր գնելու , Հայոց թիւը աճեցնելու միջոցները խորուած էին . միակ լուրջ

փորձը զոր Հայերը այս ամբողջ դարուն մէջ ուրուագծած ըլլան, Փորձը ուրուագծի վիճակի մէջ մնաց, Եկաւ ուսումնարանական պատերազմը, եւ հայ ժողովրդին վարչութիւնը ձեռքերն ունեցող անձերը գործեցին մեր պատմութեան ամենէն կարեւոր սխալներէն մէկը, եւ որ հիմնաքարը եղաւ բոլոր միւս սխալներուն, Մինչև Ռուսիոյ Սան-Սթէֆանոյ հասնիլը, բոլոր Թրքահայերը, առանց բացառութեան, հակառու էին. Ռուսաստանը այդ միջոցին կը նկատուէր կիսավայրենի եւ բռնաւոր երկիր մը. ուս. կառավարութիւնը «ազգակուլ» կ'անուանուէր. այդ կարծիքը տարածուած էր Բոլոնիոյ մէջ Ռուսին բռնած ընթացքին հետեւանքով, եւ այդ կարծիքը շեղուած էր իրիմի պատերազմին տանն, երբ Ձերասան, Անգլիոյ եւ Իտալիոյ Թուրքը պաշտպանեցին ընդդէմ Ռուսին, հռչակելով թէ «քաղաքակրթութիւնը կը պաշտպանեն ընդդէմ բարբարոսութեան»։ Պայտը Հայոց Թատրոնին մէջ խորհրդանշական տեսարաններ ներկայացուած են, ուր Նալբանդեանի ուրուականը անէջ կը կարգար Ռուսիոյ դէմ եւ երանի կուտար Թրքահայոց որ օսմանեան լուսաւոր (¹) հովանաւոյ տակ կապին ։

Այսպէս ըլլալով հանդերձ, Ներսէս վարժապետեանն պարտիարք, այդ հոգը ու կուտակուած ուսաստանցութիւնը մէկ հարուածով խզեց, ու Սան-Սթէֆանոյ, առօական բանալը երթալու յանդգնութիւնը ունեցաւ, Թուրքին ծանր լուծէն դանգատ յայտնեց իր ազգին կողմէ, Ռուսին պաշտպանութիւնը խնդրեց, եւ Սան-Սթէֆանոյի դաշնագրին մէջ 16րդ յօդուածը յաշտեցաւ դնել տալ ։

Այդ յանդգնութիւնը Վարժապետեանին փառքի տրուղան է ։ այդ դիմումով, Վարժապետեան նոր թուական մը բացաւ հայ ժողովրդին. կրօնական գոյութիւն ունեցող ազգը քաղաքական կուտանի մը վրայ դրաւ. Հայուն շահերուն եւրոպական հզօր պաշտպան մը գտաւ, Թուրք, Բայց այդ առաջին քայլը միակ ուղիղ զայլը եղաւ ։ Անկից յետոյ, ամէն ինչ որ Վարժապետեան ըրաւ, եւ ամէն ինչ որ իրեն հետ, եւ իրմէ ետքը, Հայերը ըրին, այդ քայլին ջնջումը եղան, եւ սխալներ էին ։ (Սան-Սթէֆանոյի յանդգնողին մէջ 16րդ յօդուածը դնել տալու զայնովը, ըսած է Պէրլինի վեհաժողովէն առաջ Նուպար փաշա Պ. Մինաս Ձերազլին, այնպիսի գործ մին է որուն համար հայ ժողովուրդը ոսկի արձան մը պէտք է կանգնէ Ներսէսի յիշատակին» Բայց Սան-Սթէֆանոյի դիմումէն

յետոյ, Ներսէսի ընթացքը քրէական սխալներու շարք մը եղած է, եւ նոյն Նուպար փաշան կ'ըսէր ինձի, Հայաստանի կտորածներէն յետոյ « Այս բոլոր ջարդերուն գլխաւոր պատասխանատուն Ներսէս Պատրիարքն է» ։

Թուրք կառավարութիւնը, Ներսէսին խելաւի վարժածքէն սաստիկ զայրացած ըլլալուն հակառակ, իր կառավարութիւնը կուլ տուաւ եւ որոգայթ մը լարեց՝ մեծ ճարտարութեամբ Հասկըցաւ որ այդ միջոցին, Ներսէսը նեղուով, աւոր ուսաստէր ձգտումները պիտի քաշալիերէր, եւ ամբողջ հայ ժողովուրդը իր պետին հետ Ռուսին գիրկը պիտի նետէր կեղծեց, անուշ ու հայրական ձեւ մը առաւ, եւ պատրաստեց կատակեղութիւն մը, որ, աւա՜ղ, շատ փայլուն կերպով յաշտեցաւ ։ Այդ խաղին յաշտումը մանր մէջ կարեւոր դեր մը ունեցան կառավարական պաշտօն ունեցող քանի մը Հայեր, ինչպէս Յովհաննէս Նուրեան, եւլն. որոնք գիտակցաբար միջնորդի եւ մասնիչի դեր կատարեցին. ուրիշներ անգիտակցաբար ծուղակի ինկան եւ Թուրքին դրո՛ք շինեցին Հայուն փրկութեանը աշխատիլ կարծելով. ասոնցմէ էին Վարժապետեան եւ իր խորհրդականները, Կրիգոր Օտեան, Սէրփիլէն, եւլն. Այս յարգելի անձնաւորութեանց ազգապարկեթեանը եւ անկեղծութեանը վրայ տարակոյս մը ծնցնել մտքէս չեմ անցնել. բայց որքան ալ դառն ըլլայ սիրուած հէքեաթները քանդել, ասի պարտք մըն է որուն առջեւ չեմ կրնար խուսափիլ ։ այդ ազգասէրները չարաչար խաբուեցան եւ սխալ գործեցին ։

Թուրք կառավարութիւնը, իրեն կոնակ ունենալով Անգլիան որ կ'ուզէր Ռուսիան հանդէր բարձր Հայաստանէն, Ներսէսը պաշարեց ճաղքեր եւ շողքերով խոտուամներով ։ Իր հաշ-ֆէնտիները համոզեցին Ներսէսը թէ Թուրք կառավարութիւնը մտադիր է Հայոց չորհուրէ շատ աւելլին քան ինչ որ Ռուսին ձեռքով պիտի ըստանային, եւ թէ անխնամութիւն էր գիրկը ինչպէս «ազգապարկ Ռուսին»։ Սիւս կողմէ, Անգլացոցին այն վտանգը որ կը սպառնար հայ ժողովրդին, եթէ Ներսէս յամառէր իր ուսաստիւրութեան մէջ. Էդէտք էր վախճալ Թուրքին զայրոյթէն, Հայերը ամբողջ կրնային կտորուիլ ։ Ներսէս դրոյեցաւ, համոզուեցաւ, զայ միջոցին, Պէրլինի վեհաժողովը կը գումարուէր Թուրք կառավարութիւնը ինքնաբերաբար թոյլ տուաւ Ներսէսին որ պատգամաւորութիւն մը զրկէ հոն եւ իր պահանջը ներկայացնէ Եւրոպային ։ Նոյն իսկ արտօնեց որ պատգամաւոր-

ներուն եւ Պատրիարքարանին մէջ ծածկադրով թղթակցութիւն կատարուի . . . ալ ասիկա կատարն էր հեղծութեան . Թուրքը, որ իր էֆէն-սիններուն միջոցով պիտի խմանար Ներսէսին աւելն մէջ շարժումը, արտաքուստ գործելու բացարձակ ազատութիւն տալու ձեռք կ'առնէր . եւ Ներսէս խաբուեցաւ . իրեն հետ խաբուեցան Օսման, Սէրփիչէն եւ ուրիշ խորհրդակցաններ . Եւ այն ատեն է որ հանձնարեց անմտութեան գաղափար մը ունեցան . կարծեցին որ Թուրքը իր վերջնական տկարացումը զգալով , իրապէս կ'ուզէր առանձնաշնորհուհներ տալ Հայոց , եւ մտածեցին թէ փոխանակ Ռուսին միայն անձնատուր ըլլալու եւ « կլլուելու » վտանգին ենթարկուելու , լաւագոյն էր Թուրքին տկարութեանէն օգտուիլ , Եւրոպայի վեց պետութեանց միանգամայն զիմել եւ ստանալ շատ աւելի կարեւոր բան մը քան ռուսական գրաւումը , — հայկական անկախութիւն մը Եւ կարծեցին որ Անգլիան , Ռուսիոյ տիրապետութեան ատալքը անհելու համար , պիտի օգնէր Հայոց բաղձանքին իրականացմանը , եւ իր ազդեցութիւնը ի գործ պիտի դնէր Ռուսիոյ առջեւ իբր պատուար այդ հայկական եղբայրները կազմելու համար , Շատ սովաւակութիւն քանի մը Հայեր , ժողովրդական անկախութեան ներկայացուցիչներէն , լարուած զաւր զգացին , եւ փութացին զուշացնել Ներսէսը : Ներսէս չանսաց , եւ Նոյն իսկ վճռեց զանոնք , Երեսփոխանական ժողով չգումարեց , ազգին կարծիքը չհարցուց իր ձեռնարկելիք գործին վրայ որմէ կախեալ էր ազգին ճակատագիրը . կարծեց որ այդպէսով պիտի ձայնձուէր ու վտանգուէր իր ծրագիրը . իր էֆէնսիններուն հետ զուլի գլխի որոշեց ամէն բան եւ գործարդեց անկախարար : Պատգամաւորութիւն մը ճամբայ հանեց զէպ ի Պերլին . այդ պատգամաւորութեան գլխաւոր անդամն էր Խրիմեան Հայրիկը , խանդավառ հայրենասէր մը որ քաղաքագէտ մը չէր սակայն , իրեն թարգման ունենալով Պ. Մինաս Ջերաքը , խանդավառ հայրենասէր մը՝ երիտաւարդ ու անփորձ այդ անարկու պատմոյնի համար : Ճիշդ այն միջոցին որ այդ պատգամաւորութիւնը ճամբայ կ'ելլէր , անորն արդէն աղեկաթար որսալը կը գործուէր . Սան-Սթէֆանոյի զինուորէն քաղաքաւորն ալ ունեցած էր Խորէն Նարպէ եպիսկոպոսը պաշտօնապէս Ս. Բեկերսպուրի զրկելու որպէսզի Ջարին ներկայանայ եւ Հայոց համար Ռուսիոյ պաշտօնաւորութիւնը խնդրէ աւելի ընդարձակ պայմաններով : Խրիմ.

եան զեռ Պերլին հասած չէր երբ Ներսէսի կողմէն հեռագիր մը կը միկնէր Նարպէյին ետեւէն ծանուցանելու համար անոր թէ պաշտօնական մանրա մը չունի Ջարին ներկայանալու , եւ միանգամայն , վախճալով թէ Նարպէյ , հակառակ այդ ազգաբարբութեան , չեղէ դարձեալ Ջարին զիմէ՝ պաշտօնապէս ձեռնադրել իր զինուոր , Մաախի լրագրին մէջ բացայայտ ծանուցում մը կը հրատարակուէր թէ Նարպէյ եպիսկոպոսը Ջարին ներկայանալու համար Հայոց պարտիքին կողմէ պաշտօն չէ ստացած , եւ Մաախի հրատարակութիւնը եւրոպական ընդ որ թիւթիկը կ'արտատպէին : Թուրք կառավարութեան զրգումն էր որ ի գործ կը դրուէր : Եւ անա ատալին ոճիւր հայ ազգին դէմ գործուած , Հայոց կողմէ ատիկա նախախնայք մըն էր Ռուսիոյ դէմ : Ռուսիոյ բանակը երթալէ եւ Լուսական պաշտպանութիւնը խնդրելէ յետոյ , Ներսէս պաշտօնապէս ետ կ'առնէր իր զինուոր , կ'ուրանար իր նախկին ընթացքը : Պերլինի մէջ , պատգամաւորները աւելի առաջ զացին . Խրիմեան բացէ ի բաց յայտարարեց թէ Հայերը ուղղակի դժգոհութիւն մը չունին Թուրք կառավարութեան , թէ Թուրքն ալ Հայուն չափ կը չարարուի Գիւլզին ու Ջերզէզին ձեռքէ , թէ Հայոց խնդրածը ուրիշ բան չէ բաց եթէ բարենորոգումներ , եւ թէ Հայերը չեն ուզեր « Ազգակուր » Ռուսին ճանկը ինքն , Նոյն բանը գացին կրկնել Լոնտոն , Խրիմեանի յայտարարութիւնները հրատարակուած են այն ատենուան Պիւսպոլսկոն մէջ : Հետաքրքիր եղողները կրնան թղթատել այդ Պիւսպոլսկը : Ատով հայ ազգը խորապէս կը վերաբերէր ռուսական զօրութիւնը , այսինքն այն զօրութիւնը որ Հայոց պաշտպանութիւնը ռուսներէն հրապարակեց յոյսանով մը , եւ այն զօրութիւնը առանց ռուս կամ կամ անհետեւ ե որ Հայոց բաղդը վճռուի : Եւ մեր պատգամաւորները կը յուսային որ իրենց այդ զոհողութեանը , եւ Անգլիոյ հետ՝ ամբողջ արեւմտեան Սեւրոպան , Հայոց պիտի շնորհէր թագաւորութիւն մը , Ռուսին առջեւ պատնէշ կանգնելու համար : Եւ միատարար կը բացատրէին Անգլիացոցն այն չափ զոր Անգլիա ունի Հայոց անկախութիւն հարկելու . անգլիացի դիւանագէտները ժպտելով մեր պատգամաւորներուն ուր կը չունէին , եւ մեր պատգամաւորներն ալ Պոլս կը ծածկադրէին թէ «ամէն բան կարգին է» : Եւ արեւելիս կը պատահէր այնպիսի շրջանի մը ուր

ուսւ կառավարութիւնը իրապէս համակրութիւն ունէր Հայոց համար . Ալեքսանդր Բ. կայսրը Հայոց վրայ կը գուրդուար . Լորին Մելիքով Հայը Ռուսիոյ մէջ մեծագոր էր . եւ Կարապետի կը կրկնէր իր համաւաւոր բանահներ՝ *anatomie ou autonomie*, այսինքն պէտք է Թուրքիան կամ բաժնել կամ ինքնավարութեանց վերածել . Մինչեւ այդ վայրկեանը Ռուսիա ուղղակի քաջալերած էր Թուրքիոյ Հայոց զարթման շարժումը . իր Հայեւուն թոյլատրած էր զրել բոլոր այն վէպերը, երգերը եւ յօդուածները որոնք Թուրքին լուծին դէմ կը գրգռէին Թրքահայերը . եւ Լորին Մելիքով իր « վարը բան մը ըրէք, թիրեւս մենք ալ կ'օգնենք » փոխով ուսւ կառավարութեան գիտաւորութիւնները ընդշնամելու սուած էր Հայոց . եւ յայտնի իրողութիւն մըն էր որ Թուրքին լուծն փրկուած միւս քրիստոնեայ ազգութիւններուն ազատմանը մէջ Ռուսը ամենէն իրական մասնակցութիւնը ընրած էր . անշուշտ իր հետաւոր նպատակակէտը ունենալով՝ բայց գործած եր, եւ արդիւնաւորապէս . եւ այդ վայրկեանին իսկ որ մեր պատգամաւորները Ռուսին վրայ կը շարափօտէին, առասկան բանակը հայ հողին վրայ էր, Հայը Թուրքին ու Ֆրիւրին դէմ վճռակամապէս պահանջելու պատրաստ ու կարող . Սան Սթէֆանայի 18րդ յօդուածը լուրջ հիման մը վրայ կը կրթէր . Ռուսը կը պնդէր որ բանակը պիտի չվերցնէ հայկական նահանգներէն մինչեւ որ Հայոց կացութիւնը արմատապէս չբարւոթի . Այս բոլորին փոխարէն, մեր պատգամաւորները չէր նախատէին Ռուսիան . եւ առարկութիւն ալ կարելի չէ ընել թէ այդպէս ընելով Թուրքին բարկութեան առաջքն առին եւ ջարդերու հաւանականութիւնը ջնջեցին . այդ միջոցին ուսւ բանակը Սան Սթէֆանո կը գտնուէր եւ անգլիական Նաւատորմին ալ Պոլսոյ առջեւ . Թուրքը չէր կրնար ջարդելու համարձակել . Չեմ ըսեր որ Հայերը պէտք էր տարաբաղաժարք Ռուսիոյ փարէին . կրնային Ռուսիոյ զինած առնենին, միանգամայն եւրոպական միւս պետութեանց պաշտպանութիւնն ալ խնդրել . բայց իրենց պարտքն էր ձեռքէ չհանել առասկան պաշտպանութեան արդէն ստացուած ու զբաղան խոստումը . մտածելու էին որ, կը կրկնեմ, ինչ ալ ըլլայ Ռուսիոյ արամադրութիւնը Հայոց մասին, առանց Ռուսիոյ կամքին ոչինչ կարելի չէ ընել Հայոց համար :

Եւ ինչ էր այն ծրագիրը զոր կը ներկայա-

ցնէին պատգամաւորները . Որպէս թէ պարզ բարենորոգումներ կ'ուզէին, բայց աղաչաւոր փափուքով մը, եւ աչքի քթթումով կը հասկնէին թէ փափաքածնին ուրիշ բան չէ բայց եթէ հայկական թագաւորութիւն մը, Վանէն մինչեւ Զէյթուն, Ռուսիոյ դէմ պաշտօնաւ ըլլալու համար . . . Եւ ինչ ստացան . Ունին . Վեհաժողովին մէջ եւ ոչ իսկ վեհաքառութեան ստարակալ եղաւ Հայոց խնդիրը, որովհետեւ ոչ մէկ պետութեան ներկայացուցիչ զայն իր վրայ չառաւ պաշտպանել . եւ չառացան պարզ փոքրիկ անմեղ արձանագրութեամբ մը . 61րդ յօդուածը շարադրեցին, որ հեգնութիւն մըն է՝ բաղդատմամբ Սան Սթէֆանոյի 18րդ յօդուածին . 61րդ յօդուածը կ'ըսէ թէ Բ. Դուռը յանձն կ'անէ բարենորոգումներ մտցնել (անշուշտ) Հայերէն ընտելած զաւանդուներուն մէջ (Սան Սթէֆանոյի 18րդ յօդուածին Հայկական իւսւ հանգնել բացատրութիւնը կը ջնջուէր արդէն) եւ իր ձեռք առած միջոցները հետզհետէ իմացնել եւրոպական պետութեանց . Դիտենք թէ Բ. Դուռը ինչպէս զործագրեց իր խոստումը . եւ ինչու զործագրէր, քանի որ 61րդ յօդուածը չէր ըսեր թէ, այն պարագային ուր Բ. Դուռը պարտաւանջ մնար, Եւրոպան ինչ պիտի ընէր . Բ. Դուռը, որ կը ստակը տեսնելով թէ Ռուսիան անձնական Հայոց գործը վրան առնել կ'ուզէ, անհոգ էր երբ այդ գործը կ'անցնէր եւրոպական վեց պետութեանց ձեռքը, որոնք պիտի չկրնային համաձայնիլ այդպիսի խնդիր մը լուծելու համար :

Այսչափով չ'աւարտիր սակայն Ներսէս պատուիրաբքին պատմութիւնը . Ուրիշ մաս մըն ալ կայ . Այն պահուն ուր պատգամաւորները Պերլին էին, Նուպար փաշայ Բարիկ կը գտնուէր . Եգիպտոսի նախարարապետը իր համարին ու տաղանդին բարձրագոյն զարգացմանը հասած էր . բոլանդակ Եւրոպա կը ճանչնար զինքը, Պիքընսփիլա զինքը անուանած էր « ճշմարիտ պետական մարդ » մը . ամբողջ Անգլիա զանի կը սիրէր ու կը գնահատէր . Նուպար փաշա իմանալով որ Հայերը Պերլինի Վեհաժողովին պատգամաւորութիւն մը կը զրկեն, կը փութայ ծրագրի մը պատրաստել հայկական զաւանդու բարեկարգման մասին . Այդ ծրագիրը (զոր թեւեւս հրատարակեց մեր յառաջիկայ թիւերէն մէկուն մէջ) արգելեց է գիտական ուսումնասիրութեան մը եւ կը ներկայացնէ բացարձակապէս իրականանալի պայմաններ . անոր մէջ ոչ մէկ կէտ կայ որ վրաւորէ այս ինչ կամ այն

ինչ պետութիւնը, ոչ իսկ բառ մը որ թուրք կառավարութիւնը գրգռէ. յատակադիր մըն է կանտոնաւոր վարչութեան՝ հայկական նահանգներուն համար, եւրոպական միջազգային երաշխաւորութեան տակ, կազմակերպուած՝ եւրոպական ուղղիչ ուժերով, Նուպար փաշա կ'ուզէր կերպով մը կրկնել Հայաստանի մէջ ինչ որ փորձած եւ յաջողած էր Եղիպտոսի մէջ. — հաստատել եւրոպական արքայութիւն մը եւ վարչութիւն մը՝ հայկական գաւառներուն մէջ, Ոչ մէկ ազգայնական չեղառնի ծրագիրը, ոչ մէկ անխարկութիւն անկախութեան. բայց Նուպար կ'ստաւարակէր թրքահայաստակ քրիստոնէս կուսակալ մը եւրոպացիներէն վաւերացուած, եւ թերեւս կը մտածէր որ ամբողջ ազգը ուշիմութիւնը պիտի ունենար այդ պտուտուն յանձնել իրեն որ միակ կարողն էր այդ գործին. եւ ինքը զիտէր որ երբ արքայութիւնը եւ հաւասարութիւնը լրջօրէն տիրել տար թուրքիոյ հայկական նահանգներուն մէջ, հայ տարրը պիտի աճէր, զօրանար եւ իր ինքնութիւնը ինքնին պիտի գտնէր։ Անշուշտ Նուպարի ծրագիրը արդիւններու պիտի հանդիպէր. Ռուսիա, որ չ'ուզէր Տաճկաստանի բարեկարգումը՝ որպէս զի որ մը կարենայ զրաւել, պիտի խոչընդոտ յարուցանէր այդ ծրագրին գործադրումին. բայց այդ չըլտնին, արեւմտեան Եւրոպան շատ զօրաւոր էր, եւ ինչպէս ուրիշ կէտերու մէջ, այդ կէտին վրայ ալ կարելի էր որ Ռուսին յաղթէր եւ այդ ծրագրին գործադրութիւնը իրականացնէր, մանաւանդ որ արեւմտեան Եւրոպան իրապէս կը փափաքէր որ Տաճկաստան բարեկարգուի։ Ամէն պարագայի մէջ, Նուպար փաշային միջամտութիւնը թանկագին առիթ մըն էր, եւ ինչէն Ներսէս յանդգնութիւն ունեցած ըլլար Նուպարը հանակուրտ իւր իբր Հայոց պատգամաւոր, տարակոյտ չկայ թէ Նուպար աւելի աղէկ պիտի գիտնար Հայոց խնդրոյն համար գործնական արդիւնք մը ձեռք ձգել քան իրիմեան Հայրիկը, Նուպար ներքաշուարացած էր իր ծրագիրը Բաղրիկի գերմանական գիւսպան Հոճէնյոնէ կոմսին, որ սքանչալցում յայտնած էր, եւ անգլիական զիւպան Լորտ Լայլնսին, որ գոչած էր «Ասիկա բանալին է Արեւելեան խնդրոյն»։ Այս ծրագիրը ընդունելը տարբեր ուղղութիւն մըն էր Ռուսիոյ պաշտպանութեանը ենթակուելէն. բայց նմանապէս գործնական ճամբայ մըն էր, եւ անմիջական արդիւնքներ խոստացող։ Նուպար զրկեց իր ծրագիրը Ներսէս պատրիարքին եւ

խնդրեց որ իրեն պաշտօն տրուի երթալ Պերլին անձամբ ներկայացնել իր ծրագիրը ազգին կողմէ, Ներսէս մերժեց։ Թուրք կառավարութիւնը չէր ուզէր ընկալանաբար որ Նուպար մը անցնի Հայաստանի գլուխը. եւ թուրք կառավարութեան ուզածը կատարուեցաւ. Ու Ներսէս իր տեղիւններուն բացատրելով այդ մերժումին պատճառը, կ'ըսէ եղբր թէ Նուպար միմայն վարչական բարենորոգումներ պահանջած է, մինչդեռ ինքը յանուն ազգին անկախութիւն փորձեց պահանջել . . . :

Ու պատգամաւորները դարձած են յաղթական, ցնծագին, աւետաւոր։ Ամբողջ Հայութիւնը, թուրք եւլած, կը սպասէր յոյսերուն իւրաքործմանը, Ռուսական բանակը հեռացած էր Հայաստանէն. եւ Հայը կը մնար թուրքին հետ դէմ առ դէմ։ Եւ ոչինչ կը պատահէր, Ներսէս ազգային ժողով գումարեց իր կատարած գործին վրայ հաշիւ տուաւ համար. կ'ըսէր ունենալ քով օրինակ մը այդ անտոնանալի ժողովին ատենագրութիւններէն, որպէս զի Ներսէսի ատենագրանութիւնէն կտոր մը յիշէի. կարելի չէ երեւակայել աւելի տղայական, աւելի ուռուցիկ, աւելի ցաւազին կերպով ծծողալի բան մը. պարզեաբարայնութեան ճառ մըն է, մինչդեռ դամբանական մը պէտք էր «Եւ ետի՛ս, կը գոչէ, նոր թուական մը բացուեցաւ Հայերուս, լի՛նք պետութեան պաշտպանութիւնը միանգամայն ապահովեցի Հայոց համար. եւ օսմանեան կառավարութիւնը անյապաղ պիտի սկսի բարենորոգումները. Անգլիա դրամատէրներ պիտի զրկէ Հայաստան, առեւտուր եւ ճարտարագործութիւն պիտի ծաղկին. հայ վաճառականներ, հայ արհեստաւորներ, հայ դրամատէրներ, հայ գրագէտներ, ճամբայ ելէք, Հայաստան դառնէք, — աւետի՛ս»։ Որպէս զի չըսուի պատմութեան մէջ թէ ամբողջ հայ ժողովուրդը ապուշ է, գանուեցան երկու երեք անգիր, ժողովրդական կուսակցութիւնէն, որոնք այդ ախուր ժողովին մէջ քրտաբուսութիւնը եւ քաջութիւնը ունեցան այդ ճամբի դէմ բողոքեցին. այդ անգիրը զգացուցին թէ Ներսէս ապօրինի ընթացք ունեցած էր իր ազգին ամենին կենսական գործը քանի մը էֆէնդիններու հետ միմիկանք կատարելով, թէ պարագայէս գործիք եղած էր թուրք կառավարութեան նպատակներուն, թէ փախուցած էր թանկագին առիթ մը որուն պէս ազգերը քիչ անգամ կ'ունենան, եւ թէ բոլոր այդ զգալի Հայաստան հրաւերը ծաղրելի ստութիւն մըն էր։ Այդ ան-

ձերը իրաւունք ունէին : Ներսէսի ճառին վրայ չաբաթ մը չանցած , թուրք կառավարութիւնը իր բարենորոգումները կը սկսէր ձերականացնել Նեղի Տնտեսանի պէս անձեր որոնց միակ յանձնաքը ազգային երգարան հրատարակած ըլլալն էր : Դի՛ յիտոյ հայկական թատրոնը կը փակուէր , հայ լրագրութիւնը կը սեղմուէր , դպրոցները քննութեան կ'ենթարկուէին , եւ գաւառներուն մէջ հալածանքը կը շնչուէր : Թէ Համիտ ի՛նչ իղճամտութեամբ կատարելագործութեան հասցուց այդ բարենորոգումները , եւ թէ Անգլիա ո՛ր աստիճան անտարբեր աչքով դիտեց այդ ամբողջը , գիտնե՛ք , եւ դառնապէս գիտնե՛ք :

Ի՛նչ եղաւ արդիւնքը Ներսէսի գործունէութեան : Ներսէս իր հակասական եւ անգիտակից վարմունքով պատճառ եղաւ Հայուն զգ՛մ գրգռելու ամէն տեսակ ուժեր . թուրքը , տեսնելով Ներսէսին Ռուսոյի բանակը երթալով , եւ յետոյ՝ Պերլինի վեհաժողովին մէջ հայ ազգին համար անկախութիւն խնդրելու յանդգնելը իմանալով , որոշեց վերջնական միջոցներու ձեռնարկել : Հայը ջախջախեալ համար Ռուսը , ծանրապէս վիրաւորուած Հայուն իր հանդիպելու հետ անհերիք ընթացքէն , իր քաղաքականութիւնը փոխեց , եւ փոխանակ Հայուն վրայ կրթնելով Տաճկաստանը քայքայելու , Հայ ու թուրք իւրաքանչիւր երկուքն ալ տկարացնելու դրութիւնը մտածեց : Եւ Անգլիա հեռուն գիտեց այս դժոխային խաղը , սղատոնական համակրութիւն մը միայն ցուցնելով Հասիլուն , զոր մերկները ա՛յնչափ աղետալի կերպով սխալ ըմբռնեցին : Ներսէս եւ իր մտերիմները գզգզին իրենց սխալը , բայց ոչ : Օտեան , Բարիք ապաստանելէ յետոյ , ըսած է անձի մը՝ «Տարի մը աշխատեցանք սա ճլրդ յողաածը դնել տալու համար . երանի՛ թէ հիմա երկու տարի աշխատէինք եւ կարեւորակնք ջընջել զայն » . այդ յօդուածը լիստակար պիտի ըլլայ մեր ազգին : Սէրվիլէն նոյնպէս խոստովանած է բարեկամի մը թէ իրենք սխալ գործեցին , եւ աչքը արցունքով լեցուն՝ երդունքած է որ անկեղծ էին իրենք եւ խաբուած էին : Ներսէս ինք ալ զգաց իր սխալը , եւ տաժանելի կերպով . այդ մարդը տխուր վերջ մը ունեցաւ : Ռուսոյի դեսպանը զինքը շատ պաղ ընդունեցաւ՝ երբ անգամ մըն ալ փորձեց անոր հետ տեսակցել : Իսկ Սուլթանը զինքը ճամբու դրուերէն զնաց զանի տեսնելու , ըսելով թէ զբաղած է կարգալու այն տեղեկագիրները զոր Հայոց Պատրիարքը տուած էր ռուսական դեսպանին

Եւ երկու հարիւր հազար հոգի ջարդուեցան . . . Եւ Ռուսիա , անչարժ ու անտարբեր , դիտեց : Իր վրէժը կը լուծէր Անգլիայէն , եւ Հայերէն : Եւ Անգլիան չիբցաւ իր նաւերը մինչեւ . Հայաստանի լեռները բարձրացնել . . .

Ջարիւրէն անմիջապէս յետոյ , իրիմեան հեծկըւտանքով լեցուն նամակ մը կը դրկէր Նուպար փայային , ներում խնդրելով , կատարուած սխալը ողբալով . . .

Եւ այս ազգին մէջ եղան մարդիկ որ Նուպար փայան «անտարբեր» մը նկատեցին . . . եւ Ներսէսին ընթացքը քննադատող մէկ երկու անհատները «գաւաճան» կոչուեցան . . .

* * *

Ահաւասիկ առաջին պատասխանատուները : Յեղափոխականներուն գործած սխալները այդ սկզբնական սխալներուն աճումն ու չափազանցումն են :

Նիւթը ըլլալով այնչափ ընդարձակ որչափ փշալից , մէկ քանի գծով միայն պիտի նշանակեմ այս վստահաւոր արտատոգութիւնները որով մեր երիտասարդութիւնը այդ թիւր սկզբնաւորութիւնը հասցուց ամենէն կորստաբեր եղբակացութեան :

Պէտք է խոստովանել որ Ներսէսի եւ իրեններուն հիմնածը , եթէ հայ ժողովուրդը ձեռք քաղաքական վտանգաւոր կացութեան մը մէջ եւ թուրքին կողմէ հալածանքներու ծրագրի մը գործադրութիւնը փութացուց , այս վերջին աներեւակայելի աղէտներուն ուղղակի պատճառ ըլլաւ ընտրութիւնը չուէր սակայն : Ներսէս եւ իր գործակիցները մտեքնէն չէին անցուցած որ օր մը հայ տղաքը զէնքերով Բ. Դրսան վրայ պիտի երթային կամ Օսմանեան Պանքան ուժանակով օղը հանելու գաղափարը պիտի ուժեղնային : Բայց առաջին սխալը ծնունդ տուաւ երկրորդ սխալին : «Հայկական յեղափոխութիւն» ըսուածը անհիմն ու օրային նկարագիրն ունի անտեսելի եւ ատելի ճլրդ յօդուածին . անոր գաւաճակն է :

Առաջին սխալողներուն մէկ կարեւոր յանցանքն ալ իրենց սխալը հրապարակաւ խոստովանած չըլլալն է : Ինչ որ Օտեան բարեկամի մը փափուաց , պէտք էր որ զրէր , որպէս զի ազգը ու շաթիփէր : Ու ի՞նչ Երազք բարեկամս մահաւանդ , որ Անգլիոյ ձեռքով Հայաստանի վերանորոգման գաղափարին ամենէն պերճախօս տարածողը եղած է իր Թե ինչ շանցեցանք Պերլինի

վեհաժողովին տեսակով եւ իր գործունէութեամբը, պէտք էր որ գրած ըլլար «Թէ Ինչ կորսնցուցինք» Գ. Չերազի ազգանունէր կեանքը արժանի է ամէն զարգանքի, բայց այս դիտարկութիւնը, զոր իրեն ալ անձամբ ներկայացուցած եմ, չեմ կրնար հոս չնշանակել, Կ'ըմբռնեմ որ Գ. Չերազին համար դասն պիտի ըլլար ՅՈՒՐ յօդուածին պատմութեանը զգալի, բայց ատով պիտի մատուցէր ամենին կենսական ծառայութիւնը իր ազգին։ Այս վերջին տարիներս, զէպերուն ազգեցութեան տակ, եւ մօտիկ տեսնելով Անգլիոյ ետական ու նենգ քաղաքականութիւնը, Գ. Չերազ իր Ֆրանսերէն թերթին մէջ լեզուն փոխեց, եւ նոյն իսկ իր թերթը առաջինը եղաւ արտասանմանի ազատ թերթերէն՝ Ռուսիոյ պաշտպանութեան կարեւորութիւնը զգացնող։ Բայց ուշ էր, եւ անբաւական, քանի որ այդ ուղղութեան փոփոխութիւնը կ'արտայայտուէր Ֆրանսերէն լրբադրի մը մէջ որ կ'ուղղուի օտարներու։ Կէտք էր հայ ժողովրդին ուղղակի խօսիլ եւ բացէ ի բաց ցուցնել անցեալին սխալը։

Ներքին գործին անմիջական հետեւանքով, հայ ազգը աչքը դէպի Անգլիա դարձուց, եւ Ռուսիոյ դէմ բացայայտօրէն հակակիր դիրք մը ընտեց։ Բովանդակ ազգը սա անհեթեթ համոզումը կըցաւ գոյացել թէ Անգլիա պիտի կրբնայ, հակառակ Ռուսիոյ, բարեկարգել երկիրը մը որ Ռուսիոյ սահմանակից է ու լեռներու մէջ կորուսած։ Բայց Անգլիա ոչինչ խոստացած էր Հայերուն, ոչ մէկ յստակ եւ ուղղակի զրդում տուած էր անոնց։ Նոյն իսկ, Հայերուն անհեթեթէն համակրող Անգլիացի մը, ձէյմա Պրայս, Արարատի վերելքը կատարելէ յետոյ Պորլէն անցնելով, Ազգային ժողովին ներկայ գտնուած եւ հետեւեալ խօսքերը արտասանած է, զոր նախկին երեսփոխան մը ինծի կրկնեց՝ «Հայերուն խորհուրդ կուտամ որ զարգանան, իրենց դպրոցները բարեկարգեն, վաճառականութիւնն առաջ տանին, ուրիշ բան չունին ընկիւր»։ Եւ ատի լաւագոյն բանն է որ կրնան ընել»։ Տակաւակ այս որոշ յայտարարութեան, Հայերը յամոզեցան տեսնել Անգլիոյ դիտումներուն մէջ ինչ որ գոյութիւն չունէր եւ չէր կրբնար ունենալ։ Գ. Պրուսայի եւ Գ. Սըլալլի, երկու հմուտ եւ ազգասէր փաստաբաններ, Լեւոնտի մէջ Հայաստան թերթը հրատարակել սկսան, յիշեցնելու համար Արեւմտեան Եւրոպային եւ մասնաւորապէս Անգլիոյ՝ Հայաստանի մէջ բարեկարգութիւններ կատարելու խոս-

տումը։ Գ. Չերազ եկաւ անոնց հետեւէն իր չ'Առնիկին հիննեց։ Անգլո-հայկական ընկերակցութիւն մը կազմուեցաւ, որուն անդամակցեցան մէկ քանի կարեւոր խորհրդարանականներ։ Անգլիա կը շարունակէր պաշտօնապէս ոչինչ խոստանալ, ոչինչ ներշնչել Հայերուն։ Բայց չէր արգելեր Հայոց անգլիամոլ շարժումը եւ տեսակ մը Անգլիացուց առաւել կամ նուազ ճիշդեքով հայասիրութիւնը։ Նոյն իսկ տարածած գոհունակութիւն մը ունէր այդ երեւոյթէն, որ իր ձեռքին մէջ տեսակ մը զէնք էր Ռուսիոյ դէմ եւ որ օր մը պիտի կրնար ծառայել իր ուրիշ գործերը կարգադրելու։ Եւ Հայերէ կ'երեւակայէին թէ այդ անգլո-հայկական միթիւնները եւ հրատարակութիւնները սկզբնաւորութիւնն էին հայկական անկախութեան ծրարին իրաւորման։ Միւս կողմէ, Թուրքը կը շարունակէր իր հայասպան գործունէութիւնը։ Մասնաւորապէս տարրին միծմածանութիւնը չեչտելու համար կառավարութիւնը չէրճէզ ու թուրք գաղութներ կը բերէր կը լեցնէր Հայաստանի մէջ։ Քիւրտներուն ամէն ապստամբիւն կը տըրբան որպէս զի Հայերը հարստասարեն առաւել քան իրենց սանձարձակ։ Համփոխէ հեծելազունները կը կազմակերպուէին, որով Քիւրտները, շահասիրուած, սրտանց կը յարէին օսմանեան գահուն, եւ Հայոց պիտուն վրայ կը պատրաստուէին իրենց պատմահարձ առաջին կայծին պայթելու համար։ Մամուլն ու գաղտնիները հետզհետէ աւելի կը սեղմուէին։ Կեանքը կը սկսէր տաժանելի դառնալ Հայոց։

Խղզուկ միջնորդարտի մէջ կազմուած, Թուրքին տառելիութեամբը անած, անգլիական յոյսերով օրօրուն, նոր սերունդ մը յառաջ եկած էր։ Նախորդ սերունդը երազող, ճառախօս, խանդավառ էր։ Այս սերունդը տնդոտ էր, անհամբեր, կտուասէր ու ժպիտ։ Նախորդը Հիւկոյով անած, կը կարծէր թէ աւելոր ֆուգնութիւն, մաքուր մարդկայնութեամբ, Եւրոպան պիտի փրկէր Հայաստանը։ Նոր սերունդը, ընկերակցական գրականութեան չիփթ ազգեցութեամբ մը տողորուած, կարծեց թէ Հալը «տաքի ելլելու» պիտի կրնար ինքնին լուծել իր գոյութեան հարցը։ Եւ ծագեցաւ «Նախական յեղափոխութիւն»ը։ Այդ երեւոյթին կազմաւորման միծապէս նպաստած է Բաֆֆին։ Բաֆֆին կրակոտ երեւակայութեամբ, խրոխտ ոգիով վիպասան մըն է, եւ իր տեղը շատ մեծ է մըր գրականութեան մէջ։ Բայց Բաֆֆի շեռասակար եղած է՝ հայ երիտասարդութեան ուղարկութիւնը դար-

ծննդով մեծ Հայաստանին վրայ եւ ծրագիրը ներնչելով ընդհանուր յեղափոխութեան մը որ գործնական հիմ չունէր . « Ո՛վ է այն խնդր որ նենդը գրեթէ չ» բառն է որ մը Երեւնոյ, որ Բաֆֆին շատ նուազ կ'արժէ իբր վիպասան , բայց որ թաղաքագէտ մտաք մըն էր . նենդը , կայծերը հայ երեսակայութիւնը վառեցին , եւ կամը ծնաւ իրագործելու ինչ որ Բաֆֆին երազած էր : Հայ յեղափոխականները բառ առ բառ գործադրել ուզած են Բաֆֆին վէպերը : Բաֆֆի դժգոհ մըն էր , ըմբոստ մըն էր . ստրկութեան մէջ սողացող ժողովրդի մը տեսարանը , զինքը դառնացուցած էր , եւ հրաւէր կը կարգար որ ժողովուրդը ցնցուի եւ հարուածին փոխարէն հարուած տայ . բայց չէր հասկցած կացութիւնը . չէր հասկցած թէ ահաբեկութեան միջոցով , ինչպէս , տակարը ստիպուած է ինքզինքը խորամանկութեամբ պահպանել , թէ առիկա կեանքին տարրական մէկ օրէնքն է . եւ չէր ճշշուած , չէր սահմանադրած խնդիրը , կարելիին մէջ զայն չէր տեղակայնացուցած . ինքնուրոյն հայտնութիւն մը վերականգնելու գիտակից յայնք մը չէր իր գործը , այլ ազատ հոգով մարդու մը գրգռուի կողմ լուծի տակ հեծող մարդոց ուղղուած : Բաֆֆի Վանի հայրենասիրական շրջանակին մէջ , Վասպուրականի արծուին թեկնարկն տակ կայմուած հոգի մըն էր : Ուրիշ մը , բուն վանքի , Մկրտիչ Փորթուգալեան , առաջին քայլը առաւ Բաֆֆին ծրագիրը իրականացնելու համար : Վանի մէջ կազմեց յեղափոխական մարմին մը , եւ ապագայ ապստամբութեան մը յաւակագիծը պատրաստեց : Յետոյ եկաւ Մարտիրոս հաստատուեցաւ եւ հիմնեց իր Արմենիան , որով Հայերը կը հրաւրէր ռուքի ելլելու՝ Մեծ Հայաստանը ազատելու համար Թուրքին լուծէն :

Ուրիշ ազդեցութիւն մը , անմիջական եւ հրեզօր , ազդեցութիւնը եղաւ Պուլկարիոյ ազատման : Այդ դէպքը որ Հայոց ալքին առջեւ կատարուած էր , իրենց կարծել տուաւ թէ միեւնոյն բանը կարելի էր Հայաստանի մէջ : Վարժագետների հայտնաբերումը ժողովին օրը , երեսփոխաններէն շատերը կը գոչէին , մանկուհիակ չեղանքով . « Մենք ալ կ'ուզենք , ուրիշ ազդեցութեան չնորոգումը մեզից ալ տրուելու է » : Նոյն բանը ըսին ստոյնը յաջորդները . բայց առանց կ'աւելցնէին . « Ուզելը չի բաւեր , պէտք է արիւն թափել » եւ այս հրէշային դաշտափարը ծնաւ մեր մէջ թէ պարզապէս արիւն կորսնցնելով կրնանք ազատութիւն ձեռք ձգել : Ձէին

տեսներ (ինչպէս մինչեւ հիմա ալ կը յամարեն չտեսնել) թէ Պուլկարիոյ , ինչպէս նաեւ Յուստոստանի , Սերպիոյ մէջ , ինչպէս այսօր Կիւտի մէջ , մահմետական լուծի տակ մնացած ազգութիւնը բացարձակ մեծամասնութիւն կը կազմէ իր հայրենիքին մէջ , եւ կարելի էր որ իր երկրին միակ տէրը ըլլար օր մը . առիկա զատ , չէին դիտեր թէ Սերպիոյ ու Պուլկարները սլաւ են , Ռուսին համացեղ , թէ Յոյները օրթոտոք են , Ռուսին դաւանակից , եւ թէ Ռուսը , բաց ի շահու պատճառներէն , զգացման պատճառներ ունէր անոնց փրկութիւնը յաջողցնելու . չէին դիտեր վերջապէս որ Պուլկարները ռուքի ելած էին՝ որոշ խոստումներ ունենալով Ռուսիոյ կողմէ որ նոյն իսկ սպաններ ու զէնք տուած էր անոնց ապստամբութիւնը գորացնելու համար . եւ միւս կողմէ չէին տեսներ թէ Հայերը դադարած էին իրենց հայրենիքին մէջ մեծամասնութիւն ունենալէ , թէ տարածուած էին Պոլսէն մինչեւ Պաղատան եւ Վանէն մինչեւ Իսթանբուլուն . եւ Ռուսը , որուն երես դարձուցած եւ զոր զայրացուցած էին , ոչ միայն իրենց օժանդակ պիտի չըլլար այդ գործին մէջ ուր միայն Ռուսին օժանդակութեամբ կարելի է յաջողիլ , այլ նկատուած էր իրենց եւ պիտի Թուրք ռուքի ելած Հայը Թուրքին հետ միամիտակ , ինչ որ Հայոցն աներկայեղի ջանքախումբը կը նշանակէր :

Բայց հայ գործիչները ժամանակ չէին կորսնցնէր ռուսամասիրութիւն , բազաւտութիւն , խորհրդածութիւն ընելով . « Ոտքի ելէք » կը գոչէին , եւ ա'յնչափ Իհպէս , Դ'էր , Ինչ յոյսով , ինչի՞ վրայ կ'ընելով , ինչի՞ յանգնելու համար — Առնոք աւելցու հարցումներէն էին .

Եւ յանկարծ , աննշան ուստնող մը , որ սովորական քննութիւնները անցնելու անկարող եղած էր , գաղափարը ունեցաւ հայ յեղափոխական շարժման գլուխ անցնելու : Նազարբէկ կը կոչուէր այդ անձը , եւ կարողուած էր յարեւոյի կնկան մը հետ որ Հայերը կ'ատէր , ռուսներէն կը խօսէր , եւ Թրքաշայերը՝ ջարդուելու արժանի արարածներ կը նկատէր : Նազարբէկ Հնչակ թերթը հիմնեց , «պէտք է գործելը» ընշանաբան դրաւ , եւ գործին սկսաւ . . .

Նազարբէկ նոր երանգ մըն ալ կը բերէր . որպէս թէ անխիստական մըն էր ինքը , (Լուսինի տեսակէն) , եւ Հայոց խնդիրը կապեց ընդհանուր մարդկային ազատագրութեան խնդրին . առիկա փառք մը աւելի եղաւ Ռուսիոյ եւ

Թուրքոյ ձեռքը՝ ընդդէմ Հայոց հակակրօնական գործերու, ներկայացնելով զանոնք, ոչ թէ իր հայրենասէրներ, այլ իր ընկերութեան թշնամիներ, Լորիս Մեյքեօֆի «վարը» ա'լ բռնորովին մոռցուած էր՝ վանցնելու եւ անխելամաղաններու այս խուժանքին առջեւ. Նազարբէկի ծրագիրը հակայական ընդարձակութիւն մը ունէր. նախ՝ Թրքասայիքը պիտի փրկէր Տաճկին ձեռքէն, յետոյ Պարսկաստանը Պարսկին լուծէն, յետոյ Ռուսաստանը Ռուսին ճիւղէն. եւ յետոյ, ամբողջ մարդկութիւնը պիտի ճողոպրէր «կապիտալիստներուն» մագիլներէն և...

Եւ ինչո՞ւ աւիւնոտ երիտասարդութիւն մը, միամիտ ու անձնուէր, հրապուրուած ու ցնցուած՝ այդ գեղեցիկ բառերէն, հետեւեցաւ այդ զարհուրեկ շողորդին...

Կրնա՞մ ինչ ցաւազին սքանչացման արտայայտութիւն մը չնուիրել բոլոր այն հայաստանցի կամ պոլսեցի երիտասարդներուն, որոնք յանգցնութեան, կորովի, զոհաբերութեան անհերեւակայելի սպացնոյցներ տուին. որոնք զինգանին, կախաղանին ու կոչկոճանքներուն արհաւիրքը արհամարհեցին։ Աստուք կը կարծէին որ իրենց զոհողութիւնները Հայրենիքին փրկութեանը պիտի ծառային. կը կարծէին որ Եւրոպա բնակող իրենց պիտեբը, հարկաւոր հմտութիւնը, խղճամտութիւնը եւ փորձառութիւնը ունէին, ու վստահ իրենց վարչիներուն վրայ, ապահով իրենց դատին յաջողմանը, կրակին մէջէն քաշելու անցան... Ժողովուրդին ծոցէն ելած այդ զինգանական ուժը որ կը ցուցնէ թէ Հայր իր գոյութեան հարցը Ռուսիոյ համար հարկաւոր թաքուն կորովն ունէր, աւելի կը ծանրացնէ վարչիներուն ոճիրը, քանի որ զէջ գործածեցին այդ ուժը եւ փճացուցին զայն...

Վտանգը սկսաւ հասուննալ, արդիւնք անկապակից, հակասական, անհիմ, խախտու գործունէութեան մը, — Գործիչները կը յայտարարէին թէ իրենց նպատակը Թրքասայոց անկախութիւնը ձեռք ձգել չէ, այլ հայկական նահանգներուն մէջ բարենորոգումներու հաստատումը յաջողութեամբ. բայց այդ պարագային մէջ պէտք էր ըմբռնել որ ասանց թուրք ժողովուրդին հետ իրական համաձայնութեան մը, եւ առանց եւրոպական պետութեան մը օժանդակութեան որոշ խստումբն, անհար էր բարենորոգումներ գործադրել ապա, մեր գործիչները եւրոպական պետութիւնները արհամարհե-

ցին, եւ բովանդակ թուրք ժողովուրդին աչքին Հայր Թշնամի ներկայացուցին։ 90ի ցոյցին, Բուսթարու, Պատրիարքը ստիպելով որ Սուլթանին արհրապարհի մը տանի հայ ժողովրդական պատգամաւորութեան մը հետ, համբան սպաննեցին թուրք զինուորական մը որ կ'ուզէր համոզել զիրենք ցրուելու (ակամատեսէ մը գիտեմ այս իրողութիւնը). եւ նոյն օրը, Շանկիւլեան, Պատրիարքաբանին մէջ, թուրքաւոր տուքին տակ առաւ ու կոտորեց։ Ինչպէս կարելի էր բարենորոգում յուսալ առկից յետոյ, երբ բնակակից երկու ժողովուրդներու մէջ խրամատը լայնափնեղ կը բացուէր՝ նոյն իսկ մեր գործիչներուն անխմաստ անխտնեմութեամբ։ Ուրեմն բարենորոգման քօղին տակ, մեր գործիչները հայկական անկախութեան մը հետաւոր նպատակը կը ծածկէին։ Բայց այդ պարագային մէջ ինչո՞ւ տարտղնել ծրագիր մը որ միմիակ որոշ կէտի մը վրայ միայն հաւանականութիւն կրնար ունենալ յաջողելու, ինչո՞ւ այդ թաքուն նպատակին գլխաւոր թատերաւայրը ընտրել Բարձր Հայաստանը ուր ամէն մարդ զիտէր որ ասի անհար է, եւ ինչո՞ւ, տարակուսական յոյսի մը համար, վստահել ամբողջ Հայրենիքը՝ ամէն տեղ, Վան ինչպէս Պոլիս, Մարաշ ինչպէս Էրզրում, Տրապիզոն ինչպէս Ուրֆա...

Բայց առաջին քայլերը աւելուած էին, եւ սխալ սխալի յաջորդեցին։ Սասունի մէջ դիմադրութիւն մը կազմակերպեցին, որ ջարդի մը յանդեպաւ։ Բաղաքական այնպիսի կացութեան մը մէջ, ուր ոչ ոք կ'ուզէր եւ կրնար Հայաստանով զբաղել, Ռուսիոյ ճիշդ ոտքին տակ, Անգլիայէն ելած ափ մը մարդով, ինչպէս հրացանով ու տղայական յոյսերով այդ ապստամբութիւնը, մահացու սխալ մըն էր։

Սասունի դէպքը օգտակար եղաւ Անգլիոյ տեսակ մը շահերուն։ Անգլիա անազին վայնասուն փրցուց, Տաճկին դէմ զայրույթի մըրկի մը հանդեպ, «Պէտք է Թուրքը վճռեմ Եւրոպայէն» ըսելու չափ առաջ դնաց, սնուղաղկի կերպով գրգռեց Հայերը եւ վերջին բոլոր դէպքերուն եւ աղէտներուն չարժատիքի հղաւ, — եւ անդին Սուտանի գործը կարգադրեց, ու Եղեպատի գրաւումը ապահովեց...

Անգլիոյ կանչուողութեան սրտոտած, Հայերը Պոլիս ցոյց մը կազմակերպեցին Սասունի ջարդէն, եւ Անգլիոյ բռնած վարմունքէն յետոյ, կը խռատուանին որ այդ ցոյցը հասկանալի էր. եւ Պոլիս ցրեթէ ամէնքը համակարծիք էին.

որ պէտք է ցոյց մը ընել : Բայց ցոյցը կատարուեցաւ ամենէն հակասական կերպով : Հայերը կ'երթային աղերսագիր մը տալ Բ. Դրան, եւ բարենորոգումներ խնդրել Սուլթանէն : Պէտք էր անգէն երթային իրեւ թուրք հպատակներ որոնք ճակատաբաց իրենց կառավարութենէն իրենց իրաւունքներուն յարգելիք կը խնդրեն : Իսկ եթէ զենքով երթալ կ'ուզէին, պէտք էր որ բացէ ի բաց ապստամբութիւն մը ըլլար ատիկա : Հայերը աղերսագիր մը տուին . . . զենքով : Բ. Դրան առջեւ, զինուորականներու վրայ կրակ պարպեցին : Յառաջ եկաւ Պոլսոյ ջարդը : Ինծի ըստւած է թէ ցոյցին պոլսեցի կազմակերպիչները որոշած էին անգէն պատգամաւորութիւն մը զրկել Բ. Դուռը, բայց Նազարէէի կողմէն զրկուած անձերը պնդեցին որ պէտք էր զինեալ ըլլար ցոյցը, որպէս թէ ընդհարում յառաջ գար եւ . . . արին թափէր : Ինծի ըստւած է նաեւ թէ Պոլսոյ գործիչները այդ միջոցին գրած են Նազարէէին եւ խնդրած են որ Լոնտոնի դիւանագիտական շրջանակներէն տեղեկանայ թէ պէ՞տք է ցոյց մը ընել : Նազարէէի խնդրուած դիմումները կատարած է, պատասխան ընդունած է թէ պէտք չէ ցոյց ընել : Բայց այդ պատասխանը Պոլիս չէ հաղորդած : Նոյն պահուն, Պ. Ջեբազ ռուսական զեսպանատան մէկ պաշտօնէին հետ տեսակցած է, եւ այդ անձը խորհուրդ տուած է որ Հայերը յանդգնութիւն մը չընեն, մինչեւ անգամ աւելցուցած է «բեր ատներդ գայ, մինք ձեզի կ'իմացնենք» : Եւ Պ. Ջեբազ հաղորդած է այս մանրամասնութիւնը Նազարէէին : Բայց Նազարէէի Պոլիս հրաման զրկած է որ ցոյցը կատարեն, եւ զենքով . . . Հոս մասունքի կ'ընեն մէկ ցաւալի սխալը Պոլսոյ գործիչներուն, որով ամենքն ալ կոյր վստահութիւն մը ունեցան Նազարէէի ըստւած անձաթի խելզի մը վրայ, եւ անոր հրամաններուն հպատակեցան, առանց երբեք մտքերնէն անցնելու մէկը զրկել եւ մօտէն ճանչնալ այդ արարածը : Ատիկա զիտել տուած եմ Արփիարեան բարեկամիս, որ իրաւունք տուած է ինծի : Բայց Արփիարեան արժանիքն ունեցաւ : Նազարէէի ճանչնալէն յետոյ, զայն աչգին ճանչցնելու :

Եւ սկսան Հայաստանի ահուկի կոտորածները . . . Ամէն տեղ, Հայերը ջախջախուեցան, կորսնցուցին իրենց դիրքը, հողը, ուժը : Եւ ապացուցին թէ անկախութեան մը արժանի չեն, ինքնուրոյն կեանքի մը նիւթական յարմարութիւնները չունին : Եւրոպան ոչ միայն չմիջա-

մտեց՝ Հայոց երազածը իրագործելու համար, ինչ որ Եւրոպան, իր անհամաձայնութիւններով եւ խնդրին ալ անյուշելիութեամբ, անկարող էր ընելու, այլ նոյն իսկ պէտք եղածը չըրաւ : Շարքերը արգիլելու համար, ինչ որ կըրնար, Եւրոպան բռնչային եղաւ :

Այդ միջոցին բռնկեցաւ Զէյթունի ապստամբութիւնը, եւ երբեք հայ յեղափոխութեան վարիչներուն ընթացքը այնքան ապիւրատ, այնքան բացարձակութիւն, աններելիօրէն ոճագործ չեղած որքան այդ դէպքին : Զէյթունի մէջ պատահած, ուրիշ տեղի դէպքերուն պէս, արին թափել տարու համար արքայաւոր խոտովութիւն մը չէր : ապստամբութիւն մըն էր : զէնքի վարժ լեռնայնեան ժողովուրդ մը, տեսնելով որ Տաճիկը իր վրայ կուգար, որոյնց, ինչպէս միշտ, չլարգուիլ : Եւ զէնքը ձեռքը դէմը եկաւ թշնամիին, ու վեց ամիս դիմադրեց : Տարակոյս չկայ որ հայ յեղափոխութեան մէջ ոչ մէկ դէպք այդ լրջութիւնը, այդ կարեւորութիւնը, այդ զրական ու բնորոշ հանգամանքը ունէր որպէս այդ դէպքը : Մեկիւրեֆին «վարժ» էր որ կը կայծկուար, ինքնաբերաբար, լեռնայնեան բնազդական ճիղով : Կոտ բան մը կար ընելու, Կոտ պէտք էր բան մը ընել : Եւ ահա ըլլուելիք բանը սկսեց էր, յաւնդելու վերայ էր : պէտք էր հոն թափել ամեն զօրութիւն, պէտք էր ամբողջ ազգը իր ամէն տեսակ ուժերը հոն կեդրոնացնել : — Ի՞նչ ըրին մեր վարիչները : Նազարէէի շատացաւ պարծենալով իր թերթին մէջ թէ այդ ապստամբութիւնը ինքը կազմակերպած էր, ինչ որ բացարձակ ստախոսութիւն մըն էր, եւ Պոլսէն ու ամէն կողմէ իրեն զրկուած գումարներէն ոչինչ կրցաւ կամ ուզեց (երկու պարագային մէջ ալ յանցաւոր) Զէյթուն հասցնել : Իսկ Դրօշակեանները մատերնին անգամ չչարժեցին, որովհետեւ այդ գործը կը նկատէին իբր հնչական գործ մը, եւ ատիկա զիրենց չէր հետաքրքրեր : Այդ վեց ամսուան հոյակապ դիմադրութեան վրայ առաք-բան տողով համետու լուրեր միայն հրատարակեցին իրենց Դրօշակին մէջ : Եւ զըրբամի, օգնութեան պահաւէն ուժասպառ, անթութեան քամակակոր, Զէյթուն գիմեց Եւրոպային, զթութիւն հայեցնով : Եւ Զէյթուն այնչափ յարգելի անուն մըն է, որ Եւրոպան լսեց անոր ձայնը եւ զայն վարդէ ազատեց ու նոյն իսկ փոքրիկ առանձնաշնորհում մը տուաւ : Եւ նոյն Եւրոպան որ ամբողջ Հայաստանի աւերումը լուռումուռ զիտած էր :

Պատկերու համար սխալներու չարագուշակ չինումածքը, Դրօշակեանները, որ նախանձէ կը մտկէին Հնչակեաններուն « յաջողութիւնները » տեսնելով եւ կ'ուզէին իրենք ալ աղմուկ հանող բան մը ընել, Պոլսոյ Պանքային ցոյցը կազմակերպեցին : Աստուգ կ'ուզէին « Եւրոպան վախցնել », կ'ուզէին եւրոպական շահերը վտանգել, որպէսզի ըսնի Եւրոպան ստիպուէր Հայերուն փափաքը կատարել : Եւ վեց հազար հայ ալ պակսեցաւ աշխարհէս . . .

Անասան, ժպտուն, Հայոց կրած այդ անազնի հարուածէն անմիջապէս յետոյ, մերինները ձեռուընթին կը շփէին Մտքերնին չարունակել էր նորն մէթոտը : Եւ այն ատեն, ծայրագոյն խելագարութեան հով մը անցաւ . իրենք իրենցմէ էլան . ա'լ զատանցանքին հասան : Տեսնող եւ դած է բարիգաքնակ Դրօշակեան մը որ իր արարանկարներուն կը հրամայէր՝ « Դացէք սա Հանդուրին բռնէ որ էնքեռքայախնը թող ընդունի անմիջապէս, ապա թէ ոչ պատուհան մը չեմ ձգեր Բարիգի մէջ, բոլոր ապակիները ցրեի ցրեի ընել կուտամ . . . » Եւ ուրիշ մը, լոնտոն, լրջօրէն մտքէն անցուցեր է . . . Անգլիական Պանքան օդը հանել : Ա'լ Մուլթանը չէր միայն որ իրենց առջեւ ծնրադիր կը դողար Ամբողջ Եւրոպան սարսափեցուցեր էին . . .

Պէտք չունիմ շարունակելու :

Ահաւասիկ « հայ յեղափոխութիւնը », իր պարզ իրականութեանը մէջ :

* * *

Դննդադատելու հանդիքին համար չէ որ գծեցի այս երկայն ու տխուր պատկերը : Կ'ատեն այդ հանդիքը այնչափ որչափ քննադատութիւնը ինքն իսկ կը սիրեմ : Ընդհակառակն, ամենախորին ցաւով մըն է որ կը գրեմ այս բոլորը, եւ ամթով : Օտարներու առջեւ այս դիտողութիւններուս եւ ոչ մէկը պիտի համարեալէի երեւան հանել : Յրանսերէն հրատարակութեանց մէջ, հայկական շարժումը միշտ ջանացած եմ ներկայացընել իբրեւ կեղեքուելէն ա'լ ճարահատ ժողովուրդի մը յուսահատ ու մոլեգին թօթվտուքը : Բայց ինչ որ պէտք է վարագուրել օտարին աչքէն, աններելի է որ ծածկենք մենք մենք : Ճաւով կը գրեմ ասոնք, ըսի, որովհետեւ անգիտակցութիւնը զոր կը տեսնեմ ազգիս մէջ, մղուած այս արտասովոր աստիճանին, զիս կը զարհուրեցնէ եւ կը տրամեցնէ :

Կ'ուզէի սխալած ըլլալ : Ամենայն սիրով պի-

տի հրատարակէի այս քննադատութեանս հերքումը, եթէ փաստեր ներկայացուէին որ ջախջախէին իմ ըսածներս : Կը նախընտրէի ես սրելալած ըլլալ քան թէ ստիպուած ըլլալ ընդունելու թէ մեր բոլոր գործիչները սխալեցան :

Գիտեմ որ առաջինը չեմ, ոչ ալ միակը, այսպէս տեսնող : Դէպքերէնս առաջ, դէպքերուն միջոցին, գտնուած են՝ հոս ու հոն՝ խոհական անհաստեղ, որոնք վտանգը նշմարած են, զգուշացուցած են, աղաչած են, բացատրած են, բողոքած են : Իմաստակ ոտնոց մը իրենց ձայնը խեղճած է : Երանի՜ թէ այդ ճիշդ ու հեռու տեսնող անձերը աւելի յամուռ ու յանդուգն եղած ըլլային, իրենց կարծիքը աւելի բարձրաձայն, աւելի յարատեւ, աւելի տիրական կերպով յայտնած ըլլային . պէտք էր, սխալ ու կործանարար գործունէութեան դէմ, ազգապաշտպան ուղիղ գործունէութիւն մը կազմակերպել : Թեւեւ կարելի ըլլար չարիքին առաջին ատենը կամ գոնէ մեղմացնել զայն :

Այս բոլորը պէտք էր ըսել հիմա, որոշապէս, ամբողջապէս, առանց վերապահութեան եւ առանց կրիքի :

Վաղը թերեւս Ռուսիա ձեռք առնէ Հայոց խնդիրը : Պէտք չէ որ ներսէսին սխալը կրկնուի : Յատկանական Նուրեանը հոն է դեռ . եւ այս վայրկեանին իսկ վարչութեան գլուխն անցնելու կը հետամտի, թուրքը նորէն անոր, եւ անոր ընկերներուն, պիտի դիմէ : Ուշադրութիւն ընելու ենք :

Չենք գիտեր թէ Ռուսիա ի՞նչ պիտի ընէ . ապահով իսկ չենք թէ բան մը պիտի ընէ . խօսք մը կայ միայն . Եւ նոյն իսկ, եթէ Ռուսիան շարժի, չենք գիտեր թէ ինչ ձեւով պիտի գործէ : Թերեւս խաղաղական միջոցներով ջանայ կարգ ու կանոն հաստատել հայկական գաւառներուն մէջ : Թերեւս ալ ստիպուի բանակը մտցնել : Ինչ ալ ընէ Ռուսիա, ասի ճակատադրական իրողութիւնն ընէ է, որ պիտի կատարուի ինքնին, երբ վայրկեանը գայ, մենք ուս զենք կամ չուզենք : Ատոր համար պէտք չկայ որ նորէն խռովութիւններ յարուցուին, եւ արեւ թափուի :

Մուտ եւ որ կրնանք, մեր այսօրուան ճգնադատոր եւ ուժաւազու վիճակին մէջ, ապատամբութիւն մը յաջողցնեն եւ դիմանալ . ու չկայ մեզի պաշտպան պետութիւն մը որ մեզի այդպիսի բան մը թելադրած ըլլայ : Այդ պարագային մէջ, անիմաստ է այսօր Հայը Կրեւ-

տեղիին բաղդատել եւ հրաւիրել որ Հայն ալ Կրետեցիին պէս ընէ : Պէտք չէ ազգ մը մղել անկարելիին : Եղեռնական ընթացք մը պիտի ունենցած ըլլար ֆրանսական կառավարութիւնը, եթէ հետեւելով Տէռուլէտներու կանչուողութիւն, Ալզաս-Լոռէնը ետ առնելու համար պատերազմի ելլէր : Մեր պզտիկ Տէռուլէտները կրնան խորհրդածել այս օրինակին վրայ :

Մեր տառապանքը կայ, իրական, եւ որ տարբաւոր թոյնն է օսմանեան պետութիւն : Ռուսիա պիտի պիտնայ զայն նկատի առնել իր գործը կատարելու համար : Մաղթենք որ Անգլիա համաձայնի Ռուսիոյ հետ, եւ Հայաստանի գործը լուծուած գտնէ առանց բաղիւսմբի, երկու կողման միահաղոյն հաւանութեամբ : Այդ պարագային մէջ, հայկական խնդրոյն մէկ մասը թերեւս մեզի համար գորացուցիչ ելք մը ունենայ : Խրքմեան, որ Զարին արեւունքին մէջ մեծ համակրութիւն կը վայելէ՝ կ'ըսեն, պարտաւոր է ըսել հիմա Զարին ինչ որ գրեց Նուպար փայային : Իրե՛ն անկէ դարմանել անցեալը : Կրնայ ընել այդ բանը, եւ պարտի ընել ինքը բարձրագոյն ներկայացուցիչն է հայ ազգին : Եւ իր ձայնը պարզ է որ լսելի ըլլայ Ինչ դերասուրկի վեհաժողովին մէջ, ըսելու համար թէ եւրոպական խաղաղութիւնը չի կրնար տեւական կերպով հաստատուիլ՝ ցորչափ հարստահարուած ազգութիւններուն տառապանքը չբարձուի :

Գործունէութեան հակառակող մը չեմ : Ընդհակառակն : Բայց կը խորհիմ որ լաւագոյն է չգործել քան գէշ գործել : Իրաւունք չունինք ազգը ազատելու պատրուակով զայն ջնջել :

Մտածենք այն միջոցներուն որով կրնանք մեր ազգին բարոյական գոյութիւնը պահպանել : Օգնենք այն բնագոյական կորովի ջանքերուն որով մեր ժողովուրդը, հակառակ իր ծանր վերքերուն, կրած կորուստը դարմանել կը փութայ : Նորանոր յոյսերունքներով չլիրաւորենք օտարները, որոնցմէ կախում է մեր ճակատագիրը : Այս գործունէութիւնը վտանգ չունի, ամենէն կենսականն է մեզի համար, ու միակ կարելին : Եւ ազգ մը չի կորուսիր, երբ գիտէ իր սր-խալները ճանչնալ եւ ինքզինքը ուղղել :

ԱՐՇԱԿ ԶՊԱՆԵԱՆ

«ԱՆԱՀԻՏ» ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

(Նամակ՝ Խմբագրութեան)

Կը հրատարակենք հետեւեալ գեղեցիկ նամակը զոր Պ. Ս. Շահազիզեանց զրկած է Անանիսի խմբագրութեան, ի պատասխան այնտատակութեան հրաւերին զոր ուղղած է ինքը իրեն : Մեր ընթերցողները հիացմամբ պիտի կարդան, մեզի պէս, այս ազնիւ տղերքը, եւ միանգամայն, մեզի հետ, ամենքն ալ պիտի բողոքեն Պ. Շահազիզեանցի առարկութեան դէմ որով, հին սերունդին պատկանելը մէջ բերելով, կը հետեւնէ թէ երիտասարդ գործներու խումբի մը մէջ այլ եւս ինքը տեղ մը չի կրնար գրաւել : Մենք կը հաւատանք որ կան հոգիներ որոնք չեն ծերանար, որոնք ընդհակառակն հինալով աւելի կը գեղեցկանան. եւ այդ հոգիներէն է «Լեւոնի վիշտ»-ին ու «Հրապարակախօս ձայն» ին հոգիներով, որ, անձնուէր ու բազմարդէն կեանքէ մը յետոյ, հիմա իրաւունք ունի իր ազգին ուղղելու իր հանրածանօթ երգին սիրուն տողերը :

... Անուանան ջերմ սիրով
Եւ սիրեցի իմ հայրենիքը.
Գրեն՝ եւ դու նոյն շուրջով :

Մեծարգոյ հայրենակից ,

Ձեր նամակը ստացել եմ Անանիսի ազգի հետ միասին, որի համար յայտնում եմ ձեզ իմ խորին շնորհակալութիւնը :

Անանիսի երեւան գալը այս ժամանակամիջոցին առանձին նշանակաւոր է մեր ազգային կեանքի վերաբերութեամբ : Այսօր, երբ Հայը վիրաւոր Սամարացու պէս ընկած է ճանապարհին եւ մինչեւ անգամ թագապալակ Ղեւտացին, մօտից անցնելով, ուշ չի դարձնում նրա վերայ - այսօր, երբ մեր ազգը ներկայացնում է մի res nullius եւ ամէն ոք ներելի է համարում սեպհականիւ այդ «անտէր ժառանգութիւնը»՝ Անանիսի պէս մի հրապարակախօս բերան կարող է այն ազգի իրաւունքներին թարգման եւ գործակալ հանդիսանալ Եւրոպայի առջեւ, որով եւ մեծ ծառայութիւն ունի մատուցանելու իւր հայրենակիցներին : (1)

(1) Պ. Տախաղիկեանց «Անանիսի» ճրագրին մէջ տեսնել է զատուածէն աւելին : «Անանիս»-ի հայ հասարակութեան կ'ուղղուի միայն, ֆրանսերէն մաս պիտի չունենայ, հետեւաբար չի կրնար Հայոց պահանջները Եւրոպային ծանօթացնելու գործը կատար